ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՐԵՆԻ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԵՎ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ցանկանում է օգտվել Միավորված ազգերի կազմակերպության Համաշխարհային պարենի ծրագրի օգնությունից (այսուհետ՝ Համաշխարհային պարենի ծրագիր), եւ

նկատի ունենալով, որ Համաշխարհային պարենի ծրագիրը՝ ընդառաջելով Կառավարության խնդրանքին, համաձայն է նման օգնություն ցուցաբերել,

Համաշխարհային պարենի ծրագիրը եւ Կառավարությունը, բարեկամական համագործակցության ոգով կնքում են սույն Համաձայնագիրը, որը բովանդակում է ընդհանուր պայմաններն ու ժամկետները, որոնց համաձայն նման օգնության Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է ցուցաբերել, իսկ Կառավարությունն օգտվել այդ օգնությունից՝ ըստ Համաշխարհային պարենի ծրագրի Ընդհանուր եւ ֆինանսական կարգավորումների եւ կանոնների:

ՀՈԴՎԱԾ 1. ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

1. Կառավարությունը կարող է դիմել Համաշխարհային պարենի ծրագրին պարենային օգնության խնդրանքով՝ տնտեսական եւ սոցիալական զարգացման ծրագրերի աջակցության կամ բնական աղետների եւ այլ արտակարգ իրավիճակների հետեւանքով առաջացած պարենի արտակարգ կարիքները բավարարելու համար:
2. Կառավարությունն օգնության ցանկացած դիմում սովորաբար ներկայացնում է Համաշխարհային պարենի ծրագրի նշած ձեւով՝ Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային պարենի ծրագրի ներկայացուցչի միջոցով:
3. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի անհրաժեշտ հնարավորություններ եւ համապատասխան տեղեկատվություն՝ Կառավարության օգնության դիմումը գնահատելու համար:
4. Ի հաստատումն օգնության դիմումի, Համաշխարհային պարենի ծրագիրը Կառավարությանը կտրամադրի նման օգնության համար մանրամասն Գործողությունների ծրագիր կամ Գրավոր համաձայնություն (Զարգացման ծրագրերի, Տեւական օգնության ու վերականգնման գործողությունների կամ արտակարգ օգնության գործողությունների վերաբերյալ):
5. Գործողությունների յուրաքանչյուր ծրագիր կամ Գրավոր համաձայնություն կսահմանի այն պայմաններն ու ժամկետները, որոնց համաձայն Կառավարությունը եւ Համաշխարհային պարենի ծրագիրը՝ յուրաքանչյուրը իր պարտականությունների մասով, իրականացնելու են ծրագիրը: Սույն Հիմնական համաձայնագրի հիման վրա կնքվող Գործողությունների ցանկացած ծրագիր կամ Գրավոր համաձայնություն կարգավորվում է սույն Հիմնական համաձայնագրի դրույթներով:
6. Նման համաձայնությունները (Գործողությունների ծրագրեր եւ Գրավոր համաձայնություններ) կերաշխավորեն ծրագրի եւ ծրագրային գործողությունների բոլոր փուլերը վերահսկելու ՀՊԾ-ի իրավունքը, սկսած ապրանքները երկիր հասցնելուց մինչեւ դրանց վերջնական օգտագործումը: Կառավարության կողմից սույն Հիմնական համաձայնագրով կամ դրա հիման վրա կնքված որեւէ այլ համաձայնագրով ստանձնած որեւէ պարտավորություն չկատարելու դեպքում, Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է կասեցնել կամ դադարեցնել օգնության տրամադրումը:

ՀՈԴՎԱԾ 2. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏԵՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Զարգացման ծրագրերի եւ արտակարգ օգնության գործողությունների իրականացման համար առաջին հերթին պատասխանատու է Կառավարությունը կամ այլ՝ փոխադարձ համաձայնությամբ որոշված գործակալություն, որի մասին նշված է Գործողությունների ծրագրում կամ Գրավոր համաձայնության մեջ, ըստ որի կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ցանկացած Զարգացման ծրագիր, տեւական օգնության ու վերականգնման կամ արտակարգ օգնության գործողություն:

2. Համաշխարհային պարենի ծրագիրը մուտքի նավահանգստից, սահմանային կայանից կամ Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադարձաբար համաձայնեցված երկրորդական առաքման վայրերից ապրանքները առաքում է անվճար եւ վերահսկում ու խորհրդատվական օժանդակություն է տրամադրում ցանկացած զարգացման ծրագիր, տեւական օգնություն ու վերականգնման կամ արտակարգ օգնության գործողություն իրականացնելիս:

3. Յուրաքանչյուր նախագծի դեպքում, համաձայնեցնելով Համաշխարհային պարենի ծրագրի հետ, Կառավարությունը կնշանակի ծրագրի իրականացման համար պատասխանատու գործակալություն կամ գործակալություններ, ներառյալ՝ միջազգային կամ ազգային ոչ կառավարական կազմակերպություններ, տեղական մարմիններ եւ այլն: Եթե երկրում իրականացվում է պարենային օգնության մեկից ավելի նախագիծ, Կառավարությունը կնշանակի կենտրոնական համակարգող գործակալություն՝ սննդամատակարարումը, ինչպես Համաշխարհային պարենի ծրագրի եւ իրականացվող ծրագրերի, այնպես էլ այդ իրականացվող ծրագրերի միջեւ կարգավորելու համար:

4. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի պայմաններ զարգացման նախագծերի, տեւական օգնության ու վերականգնման կամ արտակարգ օգնության գործողությունների կատարման բոլոր փուլերի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

5. Կառավարությունը կապահովի երկրի տարածքում ՀՊԾ-ի տրամադրած բոլոր պարենային ու ոչ պարենային ապրանքատեսակների անվտանգ տեղաշարժը:

6. Կառավարությունը կամ նշանակված գործակալությունը կապահովի, որ Համաշխարհային պարենի ծրագրի տրամադրած ապրանքատեսակները բարձվեն, տեղափոխվեն, պահեստավորվեն ու բաշխվեն պատշաճ հոգածությամբ ու արդյունավետությամբ եւ որ ապրանքները օգտագործվեն Կողմերի միջեւ ձեռք բերված համաձայնությանը համապատասխան: Այն դեպքում, երբ դրանք այդ կերպ չեն օգտագործվում, Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է Կառավարությունից պահանջել վերադարձնել ապրանքները:

7. Սույն Համաձայնագրով կամ դրա հիման վրա կնքված որեւէ այլ համաձայնագրով ստանձնած պարտավորություններից որեւէ մեկը Կառավարության կողմից չկատարելու դեպքում, Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է կասեցնել կամ դադարեցնել օգնությունը:

ՀՈԴՎԱԾ 3. ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Այն դեպքում, երբ ծրագրի իրականացման համար Կառավարությունն օգնություն է ստանում նաեւ այլ աղբյուրից, Կողմերը միմյանց հետ խորհրդակցում են Համաշխարհային պարենի ծրագրից եւ այլ աղբյուրից ստացած օգնությունն արդյունավետ կերպով համակարգելու համար:

ՀՈԴՎԱԾ 4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏԵՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կառավարությունը կամ նշանակված գործակալությունը Համաշխարհային պարենի ծրագրին տրամադրում են այնպիսի փաստաթղթեր, հաշիվներ, գրառումներ, հաշվետվություններ, զեկույցներ եւ այլ տեղեկատվություն, որ Համաշխարհային պարենի ծրագրին կարող են անհրաժեշտ լինել որեւէ զարգացման ծրագրի, տեւական օգնության ու վերականգնման կամ արտակարգ օգնության գործողության իրականացման

կամ այդպիսի ծրագրի իրագործելիության եւ շարունակման հնարավորությունների, կամ սույն Համաձայնագրով, կամ դրա հիման վրա կնքված այլ համաձայնագրով Կառավարության ստանձնած որեւէ պարտավորության իրականացման առնչությամբ:

2. Կառավարությունը կամ նշանակված գործակալությունը Համաշխարհային պարենի ծրագրին պարբերաբար տեղեկացնում են յուրաքանչյուր զարգացման ծրագրի, տեւական օգնության ու վերականգնման կամ արտակարգ օգնության գործողության իրականացման առաջընթացի վերաբերյալ:

3. Կառավարությունը կամ նշանակված գործակալությունը յուրաքանչյուր ծրագրի համար համաձայնեցված ժամանակահատվածներում եւ յուրաքանչյուր ծրագրի ավարտին Համաշխարհային պարենի ծրագրին տրամադրում են վերջինիս կողմից տրամադրված պարենային եւ ոչ պարենային ապրանքների օգտագործման վերաբերյալ արտաքին աուդիտորների ստուգած հաշիվները:

4. Կառավարությունը կամ նշանակված գործակալությունն աջակցում են Համաշխարհային պարենի ծրագրի կողմից ըստ համապատասխան Գործողությունների ծրագրի կամ Գրավոր համաձայնության ձեռնարկված ցանկացած ծրագրի գնահատմանը, այդ նպատակով վերջինիս տրամադրելով անհրաժեշտ ամբողջական փաստաթղթեր: Պատրաստված ցանկացած գնահատման հաշվետվությունը մեկնաբանության համար ներկայացվում է Կառավարությանը կամ նշանակված գործակալությանը:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՐԵՆԻ ԾՐԱԳՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

1. Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է Հայաստանի Հանրապետությունում հիմնել եւ պահել գրասենյակ: Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է Կառավարության համաձայնությամբ հիմնել նաեւ լրացուցիչ գրասենյակներ սույն Հիմնական համաձայնագրով նախատեսված ցանկացած գործողության կամ ծրագրի իրականացումը դյուրացնելու համար:

2. Համաշխարհային պարենի ծրագրի գրասենյակն իրականացնում է իր գործողությունները իր մանդատին եւ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ծրագրի պահանջներին համապատասխան, ներառյալ՝ հարաբերությունների հաստատումն ու պահպանումը Համաշխարհային պարենի ծրագրի եւ երկրում գործող այլ կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ:

ՀՈԴՎԱԾ 6. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՐԵՆԻ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

1. Համաշխարհային պարենի ծրագիրը կարող է Հայաստանի Հանրապետությունում նշանակել այնպիսի պաշտոնյաներ կամ այլ աշխատակիցներ, որոնց Համաշխարհային պարենի ծրագիրը անհրաժեշտ է համարում Հայաստանի Հանրապետությունում իր գործունեության իրականացման համար ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակ:

2. Համաշխարհային պարենի ծրագիրը Կառավարությանը տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային պարենի ծրագրի աշխատանքներում միջազգային պաշտոնյաների եւ այլ աշխատակիցների նշանակման վերաբերյալ:

3. Տեղացի աշխատակիցների աշխատանքային պայմաններն ու ժամկետները սահմանվում են ըստ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան որոշումների, կանոնակարգերի ու կանոնների:

ՀՈԴՎԱԾ 7. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՐԵՆԻ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Կառավարությունը կձեռնարկի ցանկացած միջոց, որ անհրաժեշտ կլինի ազատելու Համաշխարհային պարենի ծրագրի պաշտոնյաներին, գործուղված փորձագետներին եւ Համաշխարհային պարենի ծրագրի անունից ծառայություններ տրամադրող այլ անձանց իրավական այնպիսի կանոնակարգերից կամ պարտականություններից, որոնք կարող են խոչընդոտել սույն Համաձայնագրով իրականացվող գործողությունների կամ ծրագրերի աշխատանքները:

2. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կօգնի համապատասխան գրասենյակային տարածքներ գտնելու հարցում:
3. Փոխադարձ համաձայնությամբ, Կառավարությունը կվճարի Հայաստանի Հանրապետությունում ՀՊԾ-ի գործունեության իրականացման համար Համաշխարհային պարենի ծրագրի՝ որպես գրասենյակ զբաղեցրած շենքի ու մատուցված ծառայությունների համար նախատեսված ծախսերը ամբողջությամբ կամ մասնակիորեն:
4. Կառավարությունը կապահովի, որ Համաշխարհային պարենի ծրագրի որպես գրասենյակ զբաղեցրած շենքը մշտապես օգտվի կենցաղային սպասարկման ծառայություններից, եւ որ նման ծառայությունները տրամադրվեն պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների համար նախատեսված պայմաններով:
5. Հարկ եղած դեպքում, Կառավարությունը անհրաժեշտ միջոցառումներ կձեռնարկի Համաշխարհային պարենի ծրագրի գրասենյակի շենքի, ունեցվածքի եւ աշխատողների անվտանգության ու պաշտպանության համար:
6. Հարկ եղած դեպքում, Կառավարությունը կօգնի Համաշխարհային պարենի ծրագրին հարմար բնակարան գտնել միջազգային աշխատակազմի եւ Համաշխարհային պարենի ծրագրի կողմից աշխատանքի ընդունված այլ անձանց համար:

ՀՈԴՎԱԾ 8. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Իր պաշտոնական հաղորդակցության ու հեռահաղորդակցության համար Համաշխարհային պարենի ծրագրին կցուցաբերվի ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն, ինչ Կառավարության կողմից ցուցաբերվում է կառավարություններին, այդ թվում՝ դրանց դիվանագիտական ներկայացուցչություններին կամ այլ միջկառավարական եւ միջազգային կազմակերպություններին՝ փոստի, հեռագրի, գրավոր ու պատկերային տեսքով ազդանշանների փոխանցման, հեռախոսի, հաղորդալարով փոխանցման, ռադիոյով տեղեկատվության փոխանցման եւ հեռահաղորդակցության այլ միջոցների առաջնայնությունների, սակագների եւ գանձումների հարցով:
2. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի արտոնագրեր ու հաճախականություններ՝ իր գործառնական բաժինների հետ մշտական ռադիոհաղորդակցային կապ պահպանելու համար, անկախ դրանց գտնվելու վայրից:
3. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի հաղորդակցային բոլոր անհրաժեշտ սարքավորումները ներկրելու իրավունք առանց մաքսային ծառայության կողմից ուշացվելու, բռնագրավվելու կամ հարկման:
4. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի վերոհիշյալ սարքավորումներն իր գրասենյակներում եւ ավտոմեքենաներում տեղադրելու, օգտագործելու եւ ձեռքի հաղորդակցության սարքեր կրելու իրավունք:
5. Կառավարությունը կապահովի Համաշխարհային պարենի ծրագրի հաղորդակցության եւ գրագրության անձեռնմխելիությունը: Նույն անձեռնմխելիությունը առանց սահմանափակման վերաբերում է ՀՊԾ-ի տպագիր նյութերին, լուսանկարներին, սլայդներին, կինոժապավեններին եւ ձայներիզներին:
6. Համաշխարհային պարենի ծրագիրն իրավունք ունի գործածել կոդեր, առաքել եւ ստանալ փոստ եւ այլ նյութեր սուրհանդակի միջոցով կամ կնքված ծրարներով, որոնք կօգտվեն նույն արտոնություններից ու անձեռնմխելիությունից, ինչ դիվանագիտական սուրհանդակները կամ ծրարները:
7. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրին կտրամադրի բոլոր անհրաժեշտ թույլտվություններն ու արտոնագրերը սույն Համաձայնագրով նախատեսված մատակարարումների, սարքավորումների եւ այլ նյութերի ներկրման համար եւ կապահովի, որ այդ բոլոր մատակարարումները, սարքավորումները եւ այլ նյութերը ներկրվեն առանց ավելորդ ուշացումների կամ սահմանափակման:

ՀՈԴՎԱԾ 9. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրի պաշտոնյաներին ու խորհրդականներին եւ Համաշխարհային պարենի ծրագրի կողմից ծառայություններ մատուցող անձանց կտրամադրի այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք տրամադրվում

են Միավորված ազգերի կազմակերպության ու նրա Մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաներին ու խորհրդականներին եւ դրանց կողմից ծառայություններ մատուցող անձանց:

2. Համաշխարհային պարենի ծրագրում աշխատող տեղում վարձված աշխատակիցները օգտվում են անձեռնմխելիություններից իրավական գործողությունների հանդեպ իրենց պաշտոնական գործունեության ընթացքում կատարած գործողությունների առնչությամբ:

3. Կառավարությունը Համաշխարհային պարենի ծրագրի, նրա միջոցների, ֆոնդերի, գույքի եւ նրա պաշտոնյաների ու խորհրդականների նկատմամբ կիրառում է Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին Կոնվենցիայի դրույթները:

4. Կառավարությունը պատասխանատու կլինի այնպիսի հայցերի համար, որոնք որեւէ երրորդ կողմ կարող է ներկայացնել ընդդեմ ՀՊԾ-ի կամ նրա պաշտոնական խորհրդականների կամ այլ անձանց, որոնք ծառայություններ են մատուցում ՀՊԾ-ի անունից սույն Համաձայնագրի շրջանակներում, եւ վերջիններիս զերծ կպահի սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործողություններից ծագած պահանջների կամ պարտավորությունների դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՊԾ-ն ու Կառավարությունը համաձայն են, որ այդպիսի պահանջները կամ պարտավորությունները բխում են այդ անձանց կողմից դրսեւորված կոպիտ անփութության կամ միտումնավոր ու ոչ իրավական գործողության հետեւանքով:

5. Սույն Հիմնական համաձայնագրով նախատեսված գործողությունների իրականացման համար կատարվող մատակարարումները, օգտագործվող սարքավորումները եւ այլ նյութերը ենթակա չեն ուղղակի հարկերի, ավելացված արժեքի հարկի, վճարների, տուժանքների եւ տուրքերի գանձման:

ՀՈԴՎԱԾ 10. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

Համաշխարհային պարենի ծրագրի անձնակազմի արտոնություններն ու անձեռնմխելիությունը շնորհվում են ի շահ Միավորված ազգերի կազմակերպության եւ Համաշխարհային պարենի ծրագրի, այլ ոչ թե շահագրգիռ անձանց անձնական շահի համար: Համաշխարհային պարենի ծրագրի գործադիր տնօրենը կարող է ցանկացած դեպքում հրաժարվել անձեռնմխելիությունից, եթե իր կարծիքով, անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը եւ եթե անձեռնմխելիությունից զրկելը հնարավոր է կատարել՝ չվնասելով Միավորված ազգերի կազմակերպության եւ Համաշխարհային պարենի ծրագրի շահերին:

ՀՈԴՎԱԾ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն Համաձայնագրից, Գործողությունների ծրագրից կամ Գրավոր համաձայնությունից բխող կամ Կառավարության եւ Համաշխարհային պարենի ծրագրի միջեւ դրանց շուրջ ծագած ցանկացած վեճ, որը չի լուծվում բանակցության միջոցով կամ կարգավորման այլ համաձայնեցված միջոցով, Կողմերից մեկի պահանջով ներկայացվում է միջնորդ դատարան: Դատավարությունը տեղի է ունենում ստացող երկրից դուրս, Կողմերի համաձայնությամբ՝ մեկ այլ վայրում: Յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկ միջնորդ դատավոր եւ մյուս Կողմին հայտնում է իր միջնորդ դատավորի անունը: Եթե միջնորդ դատավորները չեն կարողանում վճռի կայացման հարցում համաձայնության գալ, անմիջապես նշանակում են երրորդ միջնորդ դատավորին: Եթե դատավարության համար դիմելուց հետո երեսուն օրվա ընթացքում Կողմերից մեկը միջնորդ դատավոր չի նշանակում կամ, եթե նշանակված միջնորդ դատավորները համաձայնության չեն եկել վճռի կայացման եւ երրորդ միջնորդ դատավորի նշանակման հարցում, Կողմերից յուրաքանչյուրը՝ ըստ գործի ընթացքի, միջնորդ դատավոր կամ երրորդ միջնորդ դատավոր նշանակելու խնդրանքով կարող է դիմել Միջազգային դատարանի նախագահին: Միջնորդ դատավարության ծախսերը կրում են Կողմերը, որոնց չափը սահմանվում է միջնորդ դատավարության կայացրած վճռով: Կողմերը միջնորդ դատավարության վճիռն ընդունում են որպես վեճի վերաբերյալ կայացած վերջնական վճիռ:

ՀՈԴՎԱԾ 12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել այն ստորագրած Կողմերի գրավոր համաձայնությամբ: Այդ փոփոխությունները կձեւակերպվեն առանձին արձանագրությամբ, որը ուժի մեջ կմտնի սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով:
2. Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է Կողմերից որեւէ մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին մյուսի Կողմին գրավոր ծանուցելու օրվանից վեց ամիս հետո: Չնայած դադարեցման վերաբերյալ նման ծանուցման, սույն Համաձայնագիրը կարող է ուժի մեջ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ լիովին չեն կատարվել կամ ավարտվել սույն Հիմնական համաձայնագրի հիման վրա կնքված Գործողությունների ծրագրերը կամ Գրավոր համաձայնությունները:
3. Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով Կառավարության ստանձնած պարտավորությունները կշարունակեն սույն հոդվածի 2-րդ կետով այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտ կլինի սույն Համաձայնագրով Համաշխարհային պարենի ծրագրի միջոցները, ֆոնդերն ու գույքը հետ ընդունելու, ինչպես նաեւ Համաշխարհային պարենի ծրագրի կողմից ծառայություններ մատուցող անձանց կանոնավոր հետկանչի համար:
4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կառավարության կողմից Համաշխարհային պարենի ծրագրին միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցելու պահից:

Ի վկայություն վերոհիշյալի, ներքոստորագրյալները, լինելով Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Միավորված ազգերի կազմակերպության Համաշխարհային պարենի ծրագրի կողմից պատշաճորեն լիազորված, Կողմերի անունից ստորագրեցին սույն Համաձայնագիրը՝ հայերեն եւ անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:
Կատարված է Երեւան քաղաքում 2000 թվականի հունիսի 9-ին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի սեպտեմբերի 28-ից: